

Յուրաքանչյուր անձ, որը գտնվում է ՌԴ-ում՝ անկախ քաղաքացիությունից, ապահովագրական փաթեթի կամ այլ փաստաթղթերի առկայությունից, ունի շտապ բժշկական օգնության ծառայությունը անվճար ստանալու իրավունք:¹

Շտապ օգնությունը տրամադրվում է այն դեպքերում, երբ կա կյանքին սպառնացող վտանգ և անհրաժեշտ է շտապ բժշկական միջամտություն:

Անվճար բժշկական օգնություն տրամադրվում է միայն պետական հիվանդանոցներում:

ՌԴ բոլոր քաղաքներում գործող շտապ օգնության հեռախոսահամրներն են 103 կամ 112՝ բջջային հեռախոսից (շտապ օգնություն կարելի է կանչել նույնիսկ արգելափակված հեռախոսից): Չանգ կատարելուց հետո պետք է անմիջապես տեղեկացնել, թե ինչ է պատահել, որտեղ է գտնվում տուժած քաղաքացին, պատասխանել օպերատորի հարցրեին:

ՇՏԱԿ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Ե ԿԱՆՉԵԼ՝

- եթե մարդը ստացել է լուրջ վնասվածք. օրինակ՝ ենթարկվել է վրաների կամ ընկել լուսամուտից,
- գիտակցության կորստի դեպքում,
- դժբախտ պատահարի դեպքում,
- ծանր արևահոսության դեպքում,
- ծանր թունավորման դեպքում,
- եթե հղի կնոջ մոտ սկսվել են կծկումներ կամ հանկարծակի ցավեր:



¹ՌԴ Կառավարության 2013 թվականի մարտի 6-ի թիվ 186 «Ռուսաստանի Դաշնության տարածքում օտարերկրյա քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու կանոնները հաստատելու մասին» որոշում:




Շտապ օգնության
հեռախոսահամարն է
103 կամ **112**
բջջային հեռախոսից:

+7 967 079-71-45
+7 915 452-83-92
+7 910 000-55-18

Հիշե՛ք, որ Դուք ունեք շտապ
բժշկական օգնություն կանչելու
իրավունք . «Շտապ օգնություն»-ն
իրավուբն չունի Ձեզ մերժել, եթե
Դուք չունեք ապահովագրություն
կամ այլ փաստաթղթեր:

Եթե ունեք բժշկական օգնության
ծառայության հետ կապված
հարցեր կամ խորհրդատվության
կարիք, կամ ցանկանում եք իմանալ,
թե ինչպե՞ս պաշտպանեք Ձեզ՝
կարող եք զանգահարել հետևյալ
հեռախոսահամարին:



ՇՏԱԴ
ԲԺՇԿԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ